

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

ՀՀ ԿԲ նախագահի 2024թ. նոյեմբերի 6-ի թիվ 1/422Ա որոշմամբ գրանցված ծրագրային ազդագրի



«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, Ա.Արմենակյան 127
Հեռ.՝ (+374 10) 65-00-86
Էլ. փոստ՝ office@ena.am
Կայք՝ www.ena.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2
Հեռ.՝ (+37410) 56 11 11
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ
ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս (այսուհետ՝ Պարտատոմս)
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	40 (քառասուն) մլն՝ դոլարային արտահայտությամբ
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	3
ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	4
1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	4
1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը	10
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	13
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	14
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	14
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	15
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	15
1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը	16
1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ	16
ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	19
3.2 Ռիսկային գործոններ	19

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

<u>Կարեն Դարբինյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի նախագահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>Նարեկ Կարապետյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի նախագահի տեղակալ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>Սերգեյ Պողոսով</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>Վարդան Մակարյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>Կարեն Հարությունյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>Նաիրի Ադամյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
<u>«Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Շուշանիկ Հովսեփյանի</u> (անուն, ազգանուն)	<u>Տեղաբաշխող</u>	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<u>Կարեն Հարությունյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր Տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	12.11.2024թ. (ամսաթիվ)
---	-----------------------------------	---	---------------------------

Կ.Տ.

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն ծրագրային ազդագիրը (այսուհետ՝ նաև Ազդագիր կամ Ծրագրային Ազդագիր) և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.ena.am և www.ameriabank.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Լրիվ ֆիրմային անվանում

Հայերեն՝	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն
Ռուսերեն՝	Закрывтое акционерное общество «Электрические сети Армении»
Անգլերեն՝	“Electric Networks of Armenia” closed joint stock company

Կրճատ ֆիրմային անվանում

Հայերեն՝	«ՀԷՑ» ՓԲԸ
Ռուսերեն՝	ЗАО “ЭСА”
Անգլերեն՝	“ENA” CJSC

Իրավաբանական հասցեն՝	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0047, Ա.Արմենակյան 127
----------------------	---

Պետական գրանցման համար՝	273.140.01857
Գործունեության վայր՝	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0047, Ա.Արմենակյան 127

Կապի միջոցներ՝	Հեռ.՝ + 374 (10) 65-00-86 Էլ. փոստ՝ office@ena.am Կայք՝ https://www.ena.am/
----------------	--

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել Գլխավոր տնօրենի տեղակալ, Էկոնոմիկայի և Ֆինանսների տնօրեն՝ Արմեն Արշակյանին (էլ. փոստ՝ Arshakyan_AS@ena.am, հեռ.՝ +374 77 774 000):

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ ՀԷՑ, Թողարկող կամ Ընկերություն) ստեղծվել է 2002թ. մայիսին «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունները «Երևանի էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու և վերջինիս անվանափոխության արդյունքում:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց», «Կենտրոնական էլեկտրացանց» և «Երևանի էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների իրավահաջորդն է:

Ընկերությունն իրականացնում է ՀՀ տարածքում էլեկտրական էներգիայի բաշխում՝ համաձայն ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թ. օգոստոսի 30-ի N56-Ա որոշմամբ սահմանված էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման N 0092 անժամկետ լիցենզիայի (այսուհետ՝ Բաշխման լիցենզիա):

2002թ.-ի նոյեմբերին Ընկերությունը մասնավորեցվեց համաձայն ««Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» եվ «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի¹ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի² (այսուհետ՝ Մասնավորեցման պայմանագիր), ինչի արդյունքում առաջին փուլով Ընկերության բաժնետոմսերի 80.1%-ի սեփականատեր դարձավ Midland Resources Holding Ltd ընկերությունը (գրանցված 1998թ. փետրվարի 20-ին Գերսնիիում): Հետագայում Midland Resources Holding Ltd-ն ձեռքբերեց Ընկերության մնացած 19.9% բաժնետոմսերը:

Հարկ է նշել, որ Բաշխման լիցենզիան հանդիսանում է Մասնավորեցման պայմանագրի մաս:

2005թ. Interenergo B.V. (գրանցված 2004թ.-ի ապրիլին Նիդերլանդներում) և Midland Resources Holding Ltd ընկերությունների միջև կնքված պայմանագրի հիման վրա Ընկերությունն անցավ «ԻՆՏԵՐ ՌԱՕ» ընկերությունների խմբի վերահսկողությանը:

2015թ. սեպտեմբերի 30-ին «ԼԻՈՐՄԱՆԴ ՀՈԼԴԻՆԳՆԻ ԼԻՄԻԹԵԴ» (Liormand Holdings Limited, գրանցված 2010 նոյեմբերի 30-ին Կիպրոսում) և «ԻՆՏԵՐ ՌԱՕ ՀՈԼԴԻՆԳ ԲԻ. ՎԻ.» ընկերությունների միջև ստորագրվում է համաձայնագիր ՀՀ էլեկտրաէներգետիկ ակտիվների առուվաճառքի վերաբերյալ:

2017թ. ապրիլի 14-ից Ընկերության բաժնետոմսերի 70%-ը պատկանում է «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը (գրանցված 2016թ.-ի դեկտեմբերի 22-ին ՀՀ

¹ www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48751

² Պամանագրի նախագծային տարբերակը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=9822>

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համար՝ 286.120.939597), 30%-ը՝ «ԼԻՈՐՄԱՆԴ ՀՈԼԴԻՆԳԶ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությանը:

Ներկայում Ընկերությունը իրականացնում է ներդրումներ համաձայն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հաստատված ներդրումային ծրագրի: 2016թ. Հանձնաժողովի կողմից հաստատվել է Ընկերության 2016-2020թթ ներդրումային ծրագիրը՝ 347.7 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Այսուհետև նոր բաժանորդների համար պլանավորված ներդրումների ծավալների աճով պայմանավորված՝ ներդրումային ծրագիրը վերանայվել է և 2017թ. հաստատվել է 2018-2027թթ-ի ծրագիրը՝ ներդրումային ծրագրի ընդհանուր գումարը դարձնելով 307.7 մլրդ ՀՀ դրամ:

2024թ. օգոստոսի 14-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 15 N489Ա որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես «2018-2027» թվերը փոխարինել «2018-2034» թվերով:

Նոր բաժանորդների պլանավորված ծավալների աճով պայմանավորված՝ Ընկերությունը 2024թ. հունվարին մշակել է նոր ներդրումային ծրագիր 2024-2034թթ. համար՝ ընդհանուր 305.4 մլրդ ծավալով, որն էլ ներկայացվել է Հանձնաժողովին:

Ներդրումային ծրագրի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի [3.3.3 բաժնում](#):

ՀՀ էներգետիկ շուկայի ազատականացման ընդառաջ Ընկերության գործառույթները լիցենզավորման տեսանկյունից տարանջատվեցին, ինչի արդյունքում Ընկերությանը տրվեց ՀՀ տարածքում էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիա՝ համաձայն Հանձնաժողովի 2018թ. դեկտեմբերի 21-ի N 748-Ա որոշմամբ տրամադրված ԼԷ N 0633 լիցենզիայի (այսուհետ՝ Երաշխավորված մատակարարման լիցենզիա), որը ուժի մեջ է մինչև 2025թ. հուլիսի 1-ը:

2020թ. հունվարի 30-ին միջազգային առաջատար վարկանիշային գործակալություններից Moody's Investors Service-ը (այսուհետ նաև՝ Մուդիս) առաջին անգամ Թողարկողին շնորհել է Ba2 վարկանիշ՝ «կայուն» հեռանկարով, որը մեկ վարկանիշով բարձր էր նույն գործակալության կողմից ՀՀ-ին տրված վարկանիշից: Մուդիսը 2022, 2023 և 2024 թվականներին վերահաստատել է Ընկերության Ba2 վարկանիշը (2024թ. հունիսի դրությամբ հեռանկարը՝ «կայուն»):

Թողարկողի վարկանիշի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի [2.6.3 բաժնում](#):

Ընկերության առաքելությունն է՝

- նպաստել տնտեսության զարգացմանն ու ազգաբնակչության բարեկեցությանը՝ ապահովելով հուսալի, որակյալ և մատչելի էլեկտրամատակարարում:

Ընկերության ռազմավարական նպատակներն են.

- որակյալ էներգամատակարարման ապահովում սպառողներին,
- հաճախորդների սպասարկման մակարդակի բարձրացում,

- ընթացիկ ծախսերի կրճատում, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի կորուստների նվազեցում մինչև 6.4%,
- մատակարարվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարների ոչ պակաս, քան 99.5% հավաքագրում:

Ընկերության կայուն զարգացման, շահառուների կարիքներն ու սպասելիքներն առավելագույնս բավարարելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ներքին բացասական գործոնները և ռիսկերը չեզոքացնելու նպատակով Ընկերությունը սահմանել է զարգացման հետևյալ ռազմավարական ուղղությունները.

- կառավարման համակարգի զարգացում,
- կառուցվածքային բարեփոխումների իրականացում՝ ուղղված կառավարման կենտրոնացմանը, փուլային մոտեցման ներդրմանը և Ընկերության կազմակերպչական կառուցվածքի ձեւավորմանը՝ Ընկերության բիզնես ճարտարագիտության հիման վրա,
- բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխում (IPO) միջազգային կապիտալի շուկայում,
- էլեկտրաէներգիայի կորուստների կառավարման և բիլինգի ավտոմատացված համակարգերի կատարելագործում,
- արտադրական ենթակառուցվածքների արդիականացում էլեկտրամատակարարման անվտանգության, հուսալիության և որակի մակարդակի բարձրացման, տեխնոլոգիական կորուստների կրճատման և էլեկտրաէներգիայի աճող պահանջարկի ապահովման նպատակով,
- պլանային, նախազգուշացնող կառավարման մոդելից անցում ռիսկերի գնահատման և կազմակերպության նպատակների հիման վրա գործող մոդելի,
- կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության իրականացում,
- բիզնես գործընթացների արդիականացում և թվայնացում,
- շրջակա միջավայրի պահպանություն:

Թողարկողի ուժեղ կողմերը

Ստորև ներկայացված են Թողարկողի ուժեղ կողմերը, որոնք պայմանավորված են նաև էլեկտրաէներգետիկայի շուկայում Թողարկողի բնական մենաշնորհի դիրքով (լիցենզիաների բացառիկությամբ).

- կայուն, կայացած և թափանցիկ կարգավորման ռեժիմ (ծախսերի և հաստատված ներդրումների փոխհատուցման երկարաժամկետ մեխանիզմներ),
- ուժեղ և կանխատեսելի գործառնական դրամական հոսքեր,
- ՀՀ սուվերեն վարկանիշից առավել բարձր վարկանիշի առկայություն,
- գնվող/վաճառվող էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալների փոփոխությամբ (էներգոբալանսի փոփոխությամբ) պայմանավորված ռիսկի բացակայություն,
- ոլորտի պրոֆեսիոնալներից բաղկացած ղեկավարություն,
- ներդրումային ծրագրերի արդյունավետ իրականացում,
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցում,

- փոխարժեքային տատանումներից պաշտպանություն. փոխարժեքային տատանումների արդյունքում առաջացած վնասները փոխհատուցվում են՝ համաձայն Բաշխման լիցենզիայի պայմանների:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 31.12.2023թ. և Ազդագրի գրանցման ներկայացման պահի դրությամբ կազմել է 20,674,889,700 ՀՀ դրամ, որը բաժանված է 246,423 հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 83,900 ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի բաժնետերերի ցանկը (ներառյալ բաժնեմասնակցության չափերը) ներկայացված է սույն Ազդագրի 3.5.2 գլխում:

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Թողարկողի բիզնեսի նկարագիրը մանրամասն ներկայացված է Ազդագրի 3.2 բաժնում:

Ընկերության հիմնական գործունեությունն է էլեկտրաէներգիայի գնումը, էլեկտրաէներգիայի կարգավորվող բաշխումը և էլեկտրաէներգիայի մատակարարումը սպառողներին:

Ընկերությունն էլեկտրաէներգիա է գնում անմիջական արտադրողներից ուղիղ պայմանագրերի միջոցով (ինչպես նաև լիցենզիայով սահմանված այլ հիմքերով) էներգահամակարգի կարգավար՝ էլեկտրաէներգիայի արտադրության ռեժիմները և փոխհոսքերը կառավարող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կողմից սահմանված փաստացի ծավալներով:

Ընկերության կողմից էլեկտրաէներգիա արտադրողներից գնվող էլեկտրաէներգիայի (հզորության) և սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագները, բաշխման ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև էլեկտրական ցանցին միացման վճարները սահմանվում են Հաճախորդի կողմից:

Ստորև աղյուսակով ներկայացված է տեղեկատվություն Ընկերության կողմից գնված էլեկտրաէներգիայի մասին՝ արտահայտված միլիոն կիլովատ ժամով (այսուհետ՝ մլն կվտ կամ մլն կՎժ).

մլն կվտ	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Էլեկտրաէներգիայի գնում	6,138	6,443	6,011	6,445	6,465	6,887	6,967	5,442

Ստորև ներկայացված է տեղեկատվություն գնված հզորության վերաբերյալ՝ արտահայտված միլիոն մեգավատով (այսուհետ՝ մլն մգվտ կամ մլն մՎտ).

	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Հզորության գնում	19.74	23.41	23.08	22.61	22.49	21.22	13.75	60.57

Ընկերության կողմից մատակարարված (2022թ.-ից սկսած՝ նաև շուկայի ազատականացված հատվածի սպառողներ բաշխված) էլեկտրաէներգիայի ծավալները (մլն կվտժ) ըստ բնակչության, տնտեսության ոլորտների և սպառողների խմբերի ներկայացված են ստորև աղյուսակով.

	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Բնակչություն	1,854	1,906	1,815	1,927	1,977	2,026	2,048	2,050
Բյուջետային կազմակերպություններ	225	234	212	216	194	208	216	216
Արդյունաբերություն	1,378	1,440	1,266	1,365	1,502	1,516	1,223	475
Տրանսպորտ	100	102	96	102	89	94	99	62
Ոռոգում	115	158	170	154	144	172	173	157
Խմելու ջուր	59	67	62	65	63	68	60	45
Այլ սպառողներ	1,699	1,867	1,789	2,067	1,932	2,244	2,432	2,074
Շուկայի ազատականացված հատվածի սպառողներ	-	-	-	-	-	-	224	1.388
Ընդամենը	5,430	5,774	5,410	5,895	5,901	6,328	6,475	6,467

Սակագնային քաղաքականություն

Թողարկողի ծառայությունների սակագները կարգավորվում են Հանձնաժողովի կողմից:

Էլեկտրական էներգիայի գործող սակագների բաղադրիչները սահմանված են Բաշխման և Երաշխավորված մատակարարման լիցենզիայի պայմաններում:

Սակագները կարող են փոփոխվել ոչ հաճախ քան կիսամյակը մեկ անգամ:


Համաձայն լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանության՝ լիցենզավորված անձի հաշվարկային տարվա համար անհրաժեշտ հասույթը հաշվարկվում է գնված էլեկտրաէներգիայի արժեքի, շահագործման և պահպանման ծախսերի, մաշվածության, փոխհատուցման գումարի և թույլատրելի շահույթի հանրագումարով՝ նվազեցնելով այլ եկամուտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության ֆինանսական հոսքերը կապված են անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հետ, իսկ վերջինս կանոնակարգված է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված մեթոդիկայով և լիցենզիաների պայմաններով, Ընկերության ղեկավարության գնահատմամբ վերջինիս ֆինանսական արդյունքները բացասական փոփոխությունների ենթարկվելու միտումներ չունեն:

1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է [Հավելված 2-ում](#):

1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը



Ընկերության բաժնետերերն են «Լիորմանդ Լոլիինգ Լիմիթիդ» և «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ ընկերությունները: «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ հոլդինգային ընկերությունը ուղղակիորեն և անուղղակիորեն մասնակցություն ունի ՀՀ էլեկտրաէներգետիկական ոլորտի մի շարք ընկերություններում:

Ընկերության իրական շահառուներն են Սամվել Կարապետյանը (31.8%), Սարգիս Կարապետյանը (29%), Էթերի Կարապետյանը (16.8%), Տաթևիկ Կարապետյանը (13.3%) և Կարեն Կարապետյանը (9.1%):

1.1.7 Ակտիվների որակը

2024թ.-ի հունիսի 30-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 314.3 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համառոտության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 40.70%:

1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներակայացված է [Ազդագրի 3.2](#) մասում:

Օրենսդրական և կարգավորման դաշտի ռիսկ: Թողարկողը գործում է խիստ կարգավորվող ոլորտում: Համաձայն Բաշխման լիցենզիայի պայմանների՝ ՀՀ օրենսդրության, գործող իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների փոփոխությամբ կամ նորերի հաստատմամբ պայմանավորված լիցենզավորված անձի հիմնավորված լրացուցիչ

վնասները և(կամ) լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են սակագնային մարժայով և (կամ) բաշխման ծառայության սակագներով:

Լիցենզիաների հետ կապված ռիսկեր: Լիցենզիաների պայմանների (ներառյալ սակագնի հաշվարկման մեթոդաբանությունը) փոփոխությունները կատարվում են Թողարկողի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են ՀՀ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար: Ընդ որում, եթե այդ փոփոխությունները հանգեցնում են ընկերության համար լրացուցիչ ծախսերի, ապա համաձայն Բաշխման լիցենզիայի պայմանների՝ դրանք փոխհատուցվում են սակագնային մարժայով և/կամ բաշխման ծառայության սակագնով:

Սակագների կարգավորման ռիսկեր: Թողարկողի գործունեությունը, սակագների կարգավորումը վերահսկվում է Հանձնաժողովի կողմից:

Սակագների ձևավորման մեխանիզմները ներառում են Թողարկողի համար ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը, ուստի Ընկերության ղեկավարության գնահատմամբ վերջինիս ֆինանսական արդյունքները բացասական փոփոխությունների ենթարկվելու միտումներ չունեն:

Բաշխման ցանցի/ենթակառուցվածքների հետ կապված ռիսկեր: Թողարկողի գործունեության վրա կարող են էական ազդեցություն թողնել Թողարկողի վերահսկողությունից դուրս գտնվող իրադարձություններ (վատ եղանակի ազդեցությունը, երրորդ անձանց անօրինական կամ ոչ միտումնավոր գործողությունները կամ ֆորսմաժորային իրադարձությունները՝ բնական աղետներ, պատերազմներ և այլն)՝ հանգեցնելով ակտիվների և ենթակառուցվածքների վնասման, վերջինս էլ ինչ-որ ժամանակահատվածում կարող է ազդել հաճախորդների որոշակի խմբի սպասարկման շարունակականության և/կամ որակի վրա:

Տեղեկատվական համակարգերի ռիսկեր: Թողարկողն իր գործունեության համար կիրառում է բարդ տեղեկատվական տեխնոլոգիական համակարգեր: Օգտագործվող համակարգերի կամ ծրագրային ապահովման հնարավոր խափանումները (միտումնավոր կամ ոչ միտումնավոր) կարող են էական ազդեցություն ունենալ Թողարկողի բիզնես գործունեության վրա:

Ապահովագրական ռիսկեր: Թողարկողի ներկա ապահովագրական ծածկույթը հիմնականում փակում է հավանական կորուստները, պարտավորությունները ու գործունեության հետ կապված վնասները:

Ընկերության դիտարկմամբ ապահովագրական քաղաքականությունը պատշաճ կերպով ապահովում է իր հիմնական հավանական կորուստների և պարտավորությունների ապահովագրությունը:

Ֆինանսական ռիսկեր: Թողարկողի գործունեությունը ֆինանսավորվում է նրա ընթացիկ գործառնություններից ստացված, ինչպես նաև պարտքային դրամական միջոցներով: Թողարկողի ֆինանսական վիճակի վրա կարող են ազդել տոկոսադրույքների և ֆինանսական շուկայի պայմանների էական փոփոխությունները:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների

բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավարության բացակայության հավանականությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի Պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարելու անհնարիության և հավանական սնանկացման հետ:

Ներգրաված միջոցների օգտագործում: Պարտատոմսերի տեղաբաշխումից ներգրաված միջոցների օգտագործումը կարող է չարդարացնել (չբավարարել) ներդրողների սպասումները կամ պահանջները: Ապագա ներդրողները պետք է դիտարկեն Ազդագրի [2.2 Հիմնական տեղեկատվություն](#) բաժնում նշված տեղեկատվությունը և իրենք պետք է որոշեն այդ տեղեկատվության կարևորությունը Պարտատոմսերում ներդրում անելու հարցում:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, որոնք իրենց դրամական միջոցներն ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով Պարտատոմսերում ներդնելու նպատակով պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում Թողարկողի կողմից իր Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնելու նապատակով ստացել է հետևյալ լիցենզիաները.

	Լիցենզիա	Համար	Տրված է	Գործում է մինչև
1	Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա	N°0092	30.08.2002թ.	անժամկետ
2	Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիա	ԼԷ N 0633	21.12.2018թ.	01.07.2025
3	Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա	ՔՊԼ 17380	25.12.2019	անժամկետ

ԼԷ N 0633 Երաշխավորված մատակարարման լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Ընկերությունը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հայտ կներկայացնի Հանձնաժողով: Լիցենզիան չերկարաձգելու դեպքում Ընկերությունը չի մատուցի երաշխավորված մատակարարման ծառայություն, որը Ընկերության ղեկավարության գնահատմամբ վերջինիս ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա էական ազդեցություն չի ունենա, քանի որ Ընկերության ֆինանսական հոսքերը կապված են անհրաժեշտ հասույթի հետ, իսկ վերջինս կանոնակարգված է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված մեթոդիկայով և բաշխման լիցենզիաների պայմաններով:

2022 թ. փետրվարի 1-ից ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգն աստիճանական անցում է կատարել էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին, որի ներքո համապատասխան օրենսդրական փոփոխություններով և ենթաօրենսդրական կարգավորումներով նախատեսվել են էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում և մրցակցային բաղադրիչների ներդրում: Էլեկտրաէներգետիկական համակարգի ազատականացման շրջանակներում լիցենզավորման տեսանկյունից առանձնացվել են էլեկտրական էներգիայի բաշխման եւ մատակարարման գործառույթները, ինչի արդյունքում շուկայում գործում են նաև այլ լիցենզավորված մատակարարներ, մինչդեռ Ընկերությունը հանդիսանում է միակ երաշխավորված մատակարարը, որը ծառայություններ է մատուցում կարգավորվող գներով:

Ընկերության 2024թ.-ի 1-ին կիսամյակի ընդհանուր հասույթը 2023թ.-ի 1-ին կիսամյակի նկատմամբ նվազել է 5.03%-ով, իսկ գնված էլեկտրաէներգիան՝ 14.78%-ով: Ցուցանիշների նվազումը մեծամասամբ պայմանավորված է շուկայի ազատականացված հատվածի սպառողների ավելացմամբ, վերջիններս էլեկտրաէներգիա գնում են այլ մատակարարներից կամ էլ. էներգիա արտադրողներից:

Ընկերության ղեկավարության գնահատմամբ Էլեկտրաէներգետիկական համակարգի ազատականացումն Ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա էական ազդեցություն չի կարող ունենալ՝ հաշվի առնելով սակագների հաշվարկի մեխանիզմները:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2022 և 2023 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ՝

ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1, 8-րդ հարկ («Էրեբունի-Պլազա» բիզնես կենտրոն)
 հեռ.՝ (+37410) 595999
 կայք՝ www.kpmg.am

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր ժողով), Խորհուրդը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Թողարկողի բաժնետերերն են՝

Բաժնետեր	Բաժնեչափ ('000 ՀՀ դրամ)	Բաժնեչափ (%)
Տաշիր Կապիտալ» ՓԲԸ (Հայաստանի Հանրապետություն, պետական գրանցման համար՝ 286.120.939597)	14,472,414	69.999959%
«Լիորմանդ Հոլդինգ Լիմիթիդ» (Կիպրոսի Հանրապետություն, պետական գրանցման համար՝ HE277812)	6,202,475	30.000041%

Թողարկողի Խորհուրդը կազմված է 8 անդամներից.

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Կարեն Դարբինյան	Տնօրենների խորհրդի նախագահ	30 Տարի
Նարեկ Կարապետյան	Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ	7 Տարի
Հայկ Իզնադյան	Տնօրենների խորհրդի անդամ	7 Տարի
Սերգեյ Պողոսով	Տնօրենների խորհրդի անդամ	25 Տարի
Վարուժան Արտեմյան	Տնօրենների խորհրդի անդամ	7 Տարի
Արտակ Իսկանդարյան	Տնօրենների խորհրդի անդամ	12 տարի
Վարդան Մակարյան	Տնօրենների խորհրդի անդամ	4 տարի

Կարեն Հարությունյան	Տնօրենների խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն	27 տարի
---------------------	---	---------

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Կարեն Հարությունյան	Գլխավոր տնօրեն	27 Տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն առ 01.10.2024թ. կազմել է 6,722 (2023թ.՝ 6,708):

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող Պարտատոմսերն անվանական ոչ փաստաթղթային են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը դոլարային արտահայտությամբ կազմում է առավելագույնը 40 (քառասուն) միլիոն ԱՄՆ դոլար: Թողարկման արժույթը ՀՀ դրամն է և/կամ ԱՄՆ դոլարը:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով Պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը ՀՀ դրամով թողարկվող Պարտատոմսերի դեպքում կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի դեպքում՝ 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղելու է ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը և վարկերի վերաֆինանսավորմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերը կտեղաբաշխվեն ֆոնդային բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը, ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.9.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	97,070,919	209,125,377	243,456,622
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(63,952,727)	(146,292,149)	(180,303,235)
Համախառն շահույթ (վնաս)	33,118,192	62,833,228	63,153,387
Իրացման ծախսեր	(9,733,514)	(20,730,437)	(19,636,667)
Վարչական ծախսեր	(10,586,954)	(19,929,829)	(18,744,705)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	12,797,724	22,172,962	24,772,015
Գործառնական այլ եկամուտներ	2,137,617	933,929	954,861
Գործառնական այլ ծախսեր	(3,178,234)	(7,281,976)	(6,411,487)
Գործառնական շահույթ (վնաս)	11,757,107	15,824,915	19,315,389
Ֆինանսական (ծախսեր) եկամուտ	(1,882,776)	(14,002,043)	16,154,992
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)			
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	9,874,331	1,822,872	35,470,381
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	9,874,331	1,822,872	35,470,381
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(912,317)	(1,315,113)	(1,922,154)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	8,962,014	507,759	33,548,227

1.9.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	245,387,873	242,710,889	223,907,741
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	9,987,217	8,283,172	9,111,666

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Ոչ նյութական ակտիվներ	241,208	229,620	132,164
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	10,785,528	7,886,639	8,810,099
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	266,401,825	259,110,320	241,961,670
Պաշարներ	15,443,190	11,579,930	11,403,896
Տրված ընթացիկ կանխավճարներ	9,865,745	1,793,844	1,110,949
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	19,934,582	23,397,169	27,643,810
Այլ դեբիտորական պարտքեր	1,554,367	5,244,815	2,244,873
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,079,795	7,682,482	5,843,315
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	47,877,679	49,698,240	48,246,843
Ընդամենը ակտիվներ	314,279,504	308,808,560	290,208,513
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	20,674,890	20,674,890	18,654,221
Էմիսիոն եկամուտ	39,946,077	39,946,077	39,946,077
Կուտակված շահույթ	67,304,712	70,113,649	71,626,559
Ընդամենը սեփական կապիտալ	127,925,679	130,734,616	130,226,857
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	78,268,922	78,685,281	78,427,148
Պարտատոմսեր	31,766,991	15,375,256	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	20,685,938	19,864,504	17,895,932
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	130,721,851	113,925,041	96,323,080
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	15,259,614	27,151,827	27,104,900
Պարտատոմսեր	215,167	101,683	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	17,500,751	15,848,349	21,659,665
Ստացված ընթացիկ կանխավճարներ	14,379,430	13,275,282	4,853,060
Այլ կրեդիտորական պարտքեր	8,000,378	7,447,605	9,694,880
Այլ ընթացիկ պարտավորություններ	276,634	324,157	346,071
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	55,631,974	64,148,903	63,658,576
Ընդամենը պարտավորություններ	186,353,825	178,073,944	159,981,656
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	314,279,504	308,808,560	290,208,513

1.9.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	7,682,482	5,843,315	5,440,348
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	20,998,250	35,254,387	38,710,918
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(24,072,614)	(35,420,545)	(29,521,972)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(3,363,861)	1,866,289	(7,795,472)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	1,079,795	7,682,482	5,843,315

1.9.4 ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	72,737	2,061	136,141
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	13.9%	0.4%	29.6%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	5.8%	0.2%	11.8%
Զուտ շահույթի մարժա (NPM)	9.2%	0.2%	13.8%
Կապիտալի համարժեքության գործակից	0.41	0.42	0.45
Ֆինանսական կախվածության գործակից	1.46	1.36	1.23
Բացարձակ իրացվելիության գործակից*	0.18	0.46	0.36
Ընթացիկ իրացվելիության գործակից*	0.74	0.93	0.84
Ընդհանուր իրացվելիության գործակից*	1.02	1.11	1.02
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	9.0	8.2	9.1
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	40.7	44.5	40.3

Ցուցանիշի անվանումը	2024թ. 1-ին կիս. (աուդիտ չանցած)	2023թ. (աուդիտ անցած)	2022թ. (աուդիտ անցած)
Պաշարների շրջանառելիության գործակից	9.5	12.7	16.0
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	38.6	28.7	22.8
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	7.7	7.8	8.8
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	47.6	46.8	41.3

* Տվյալ գործակիցների 2023թ. հաշվարկում ներառվել են 21,523,616 հազար ՀՀ դրամ ընդհանուր ծավալով Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի օգտին թողարկված երաշխիքների գումարները՝ ի ապահովումն ՀԷՑ-ի՝ վարկային պայմանագրերի գծով վճարային պարտավորությունների կատարման: Երաշխիքները թողարկվել են «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ հանձնարարությամբ: 2022թ. թողարկված երաշխիքների ծավալը կազմել է 16,854,420 հազար ՀՀ դրամ:

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 1](#)-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.2 Ռիսկային գործոններ

Ընկերության հիմնական ֆինանսատնտեսական և գործառնական ցուցանիշները ձևավորվում են Ընկերությանը տրված լիցենզիաների պայմաններով, որում կանխատեսելիորեն վեր հանված են այն ռիսկերը, որոնք կարող են ազդել Ընկերության ֆինանսատնտեսական և գործառնական ցուցանիշների վրա: Լիցենզիաների պայմաններով սահմանված են վերջիններիս կանխարգելման կամ նվազեցման համար համապատասխան գործիքներ: Արդյունքում Ընկերության ֆինանսատնտեսական և գործառնական ցուցանիշները կանխատեսելի, կառավարելի, հաշվարկելի են:

Վերոնշյալ հանգամանքը նաև հիմք է հանդիսացել Մուդիսի կողմից Թողարկողին՝ ՀՀ վարկանիշից ավելի բարձր վարկանիշի շնորհմանը:

Ցանկացած ներդրող մինչև Թողարկողի Պարտատոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեությանը հատուկ հետևյալ ռիսկային գործոնները: Ստորև ներկայացված են այն ռիսկերը, որոնք Թողարկողը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական. ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

Օրենսդրական և կարգավորման դաշտի ռիսկ: Թողարկողը գործում է խիստ կարգավորվող ոլորտում: Համաձայն Բաշխման լիցենզիայի պայմանների՝ ՀՀ օրենսդրության, գործող իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների փոփոխությամբ կամ նորերի հաստատմամբ պայմանավորված լիցենզավորված անձի հիմնավորված լրացուցիչ վնասները և(կամ) լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են սակագնային մարժայով և (կամ) բաշխման ծառայության սակագներով: Լրացուցիչ ծախսերի և (կամ) վնասների փոխհատուցման ենթակա գումարների վերաբերյալ Լիցենզավորված անձի հետ տարաձայնություններ ունենալու դեպքում, Հանձնաժողովը, Լիցենզավորված անձի հետ համատեղ, ներգրավում է անկախ փորձագետների:

Օրենսդրական և կարգավորման դաշտի փոփոխությունների արդյունքում հնարավոր առաջացող վնասները ենթակա են ամբողջությամբ փոխհատուցման դրանց առաջացմանը հաջորդող սակագնային ժամանակահատվածում/սակագն(եր)ի գործողության ժամկետում: Անհրաժեշտ հասույթը և սակագնային մարժան կարող են վերանայվել վեցամսյա պարբերականությամբ:

Արդյունքում, օրենսդրական և կարգավորման դաշտի փոփոխությունները երկարաժամկետ հատվածում չեն կարող Ընկերության ֆինանսական արդյունքի վրա ունենալ որևէ բացասական ազդեցություն:

Լիցենզիաների հետ կապված ռիսկեր: Լիցենզիաների պայմանների (ներառյալ սակագնի հաշվարկման մեթոդաբանությունը) փոփոխությունները կատարվում են Թողարկողի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են ՀՀ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար: Ընդ որում, եթե այդ փոփոխությունները հանգեցնում են ընկերության

համար լրացուցիչ ծախսերի, ապա համաձայն Բաշխման լիցենզիայի պայմանների՝ դրանք փոխհատուցվում են սակագնային մարժայով և/կամ բաշխման ծառայության սակագնով:

Բաշխման լիցենզիան տրամադրվել է անժամկետ, իսկ Երաշխավորված մատակարարման լիցենզիայի գործողության ժամկետը ավարտվում է 2025թ.-ի հուլիսի 1-ին: Ընկերության ղեկավարության գնահատմամբ անգամ եթե Երաշխավորված մատակարարման լիցենզիան չերկարաձգվի կամ դրա հիման վրա նվազեցվի մատակարարումների ծավալը, ապա վերջինս Ընկերության ֆինանսական արդյունքների վրա չի ունենա որևէ բացասական ազդեցություն, քանի որ Ընկերությանն անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի, ինչպես նաև կատարված ներդրումային ծախսերի վերադարձն ամբողջովին ապահովվում է բաշխման սակագնային մարժայով:

Թողարկողին տրված՝ Բաշխման և Երաշխավորված մատակարարման լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքներ: Ընկերությունը լիցենզիաների պայմանների խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի. վերջինիս սահմանումը տրված է լիցենզիաների պայմաններով:

Սակագների կարգավորման ոլիսկեր: Թողարկողի գործունեությունը, սակագների կարգավորումը վերահսկվում է Հանձնաժողովի կողմից:

Սակագների ձևավորման մեխանիզմները ներառում են Թողարկողի համար ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը, ուստի Ընկերության ղեկավարության գնահատմամբ վերջինիս ֆինանսական արդյունքները բացասական փոփոխությունների ենթարկվելու միտումներ չունեն:

Կայուն սակագնային քաղաքականությունը այն հիմքերից մեկն էր, որը հաշվի է առել Մուդիս վարկանիշային գործակալությունը Թողարկողին ՀՀ սուվերեն վարկանիշից բարձր վարկանիշ շնորհելիս:

Բաշխման ցանցի/ենթակառուցվածքների հետ կապված ոլիսկեր: Թողարկողի գործունեության վրա կարող են էական ազդեցություն թողնել Թողարկողի վերահսկողությունից դուրս գտնվող իրադարձություններ (վատ եղանակի ազդեցությունը, երրորդ անձանց անօրինական կամ ոչ միտումնավոր գործողությունները կամ ֆորսմաժորային իրադարձությունները՝ բնական աղետներ, պատերազմներ և այլն)՝ հանգեցնելով ակտիվների և ենթակառուցվածքների վնասման, վերջինս էլ ինչ-որ ժամանակահատվածում կարող է ազդել հաճախորդների որոշակի խմբի սպասարկման շարունակականության և/կամ որակի վրա: Ընկերությունը իր վերահսկողությունից դուրս գտնվող՝ լիցենզիաների պայմանների իմաստով ֆորս մաժոր համարվող հանգամանքների կամ դեպքերի արդյունքում էլեկտրական էներգիայի բաշխման կամ մատակարարման գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չի կրում, սակայն Ընկերության առաջնահերթություններից է բոլոր իրավիճակներում՝ նվազագույն ժամկետներում և առավելագույն ջանքերի ներդրմամբ ապահովել բոլոր բաժանորդների որակյալ էլեկտրական էներգիայի մատակարարումը:

Թողարկողն ունի հաստատված Ներդրումային ծրագիր, որն ուղղված է հիմնականում բաշխման ցանցի հետ կապված գործառնական ոլիսկերի նվազեցմանը և ենթակառուցվածքների արդիականացմանը:

Ընկերությունն ունի Որակի կառավարման համակարգի ISO 9001:2015, Առողջության և տեխնիկական անվտանգության համակարգի ISO 45001:2018, Բնապահպանական կառավարման համակարգի ISO 14001:2015 և էներգաարդյունավետության կառավարման

համակարգի ISO 50001:2018 միջազգային ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատներ:

Բնապահպանական ռիսկեր: Թողարկողի գործունեությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, վերջինս նաև ենթակա է բնապահպանական օրենսդրական կարգավորումներին, որոնք վերաբերում են աղտոտմանը, շրջակա միջավայրի պահպանմանը կամ վտանգավոր թափոնների օգտագործմանն ու վնասագերծմանը:

Ընկերության համար բնապահպանական ռիսկերի կառավարումն առաջնահերթություն է, ուստի այդ ռիսկերը մեղմելու նպատակով իրականացնում է մի շարք միջոցառումներ.

- շրջական միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի ներդրում և կիրառում ներդրումային ծրագրերի գնահատման շրջանակներում,
- Ընկերության կողմից իրականացվող ներդրումների և կառավարչական որոշումների արդյունքում հատուկ պաշտպանվող տարածքների, կամ այլ խոցելի կենսաբազմազանություն ունեցող տարածքների վրա ազդեցության գնահատում և չեզոքացում,
- շրջակա միջավայրի դիտարկման և մեղմացնող գործողությունների իրականացման ընթացակարգերի մշակում և ներդրում,
- տարահանման և վերաբնակեցման հետ կապված ռիսկերի գնահատման համակարգի ներդրում, գործող ընթացակարգերի համապատասխանեցում PSESS (Performance Standards on Environmental and Social Sustainability, IFC) ստանդարտների պահանջներին,
- վտանգավոր նյութերի և թափոնների անվտանգ պահպանման համակարգի ներդրում,
- ջերմոցային գազերի արտանետման նվազեցում՝ էներգախնայողության և բաշխման ցանցում կորուստների նվազեցման միջոցով:

Ընկերությունն ունի բնապահպանական կառավարման ստանդարտներին համապատասխանության ISO 14001:2015 միջազգային սերտիֆիկատ:

Տեղեկատվական համակարգերի ռիսկեր: Թողարկողն իր գործունեության համար կիրառում է բարդ տեղեկատվական տեխնոլոգիական համակարգեր: Օգտագործվող համակարգերի կամ ծրագրային ապահովման հնարավոր խափանումները (միտումնավոր կամ ոչ միտումնավոր) կարող են էական ազդեցություն ունենալ Թողարկողի բիզնես գործունեության վրա, սակայն Թողարկողի գնահատմամբ այդ ռիսկերը հասցված են նվազագույնի, քանի որ Թողարկողն իր ներդրումային ծրագրի շրջանակներում մշտապես իրականացնում է համակարգերի արդիականացում և արդյունավետության բարձացմանն ուղղված այլ ներդրումներ:

Ապահովագրական ռիսկեր: Թողարկողի ներկա ապահովագրական ծածկույթը հիմնականում փակում է հավանական կորուստները, պարտավորությունները ու գործունեության հետ կապված վնասները:

Ընկերության դիտարկմամբ ապահովագրական քաղաքականությունը պատշաճ կերպով ապահովում է իր հիմնական հավանական կորուստների և պարտավորությունների ապահովագրությունը:

Ընկերությունն ունի հետևյալ ապահովագրական ծածկույթները.

- Գույքի ապահովագրություն³,
- Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն (ներառում է նաև երրորդ կողմին պատճառված վնասի պատասխանատվության ապահովագրությունը):

Եթե էական դեպք կամ պատահար տեղի ունենա, որի արդյունքում առաջանան գույքի զգալի կորուստներ (ներառյալ բաշխման ցանցը), ինչպես նաև տեղի ունենան ծառայությունների մատուցման զգալի խափանումներ, Ընկերությունը ապահովագրական պայմանագրերի ներքո կստանա համապատասխան փոխհատուցում: Սակայն, հարկ է նշել, որ կախված գույքային վնասի մասշտաբներից Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ վնասված գույքը ժամանակին վերականգնելու հարցում:

Ֆինանսական ռիսկեր: Թողարկողի գործունեությունը ֆինանսավորվում է նրա ընթացիկ գործառնություններից ստացված, ինչպես նաև պարտքային դրամական միջոցներով: Թողարկողի ֆինանսական վիճակի վրա կարող են ազդել տոկոսադրույքների և ֆինանսական շուկայի պայմանների էական փոփոխությունները:

Ընկերության առաջնահերթություններից է առկա պարտավորությունների և ֆինանսավորման հնարավոր աղբյուրների դիվերսիաֆիկացիան, որը կհանգեցնի ֆինանսական ռիսկերի մեղմանը:

Հարկ է նշել, որ Մուդիսը 2023թ.-ի մայիսին տրված վարկային կարծիքի համաձայն Ընկերության վարկունակությունը գնահատելիս կարևորել է Ընկերության կենտրոնացված բաժնետիրական կառուցվածքով պայմանավորված՝ վերջնական շահառուների կողմից ֆինանսական դժվարությունների ժամանակ աջակցություն ստանալու պոտենցիալը:

Պարտքային բեռի ռիսկ: Ընկերության գնահատմամբ վերջինիս պարտքային բեռը Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կառավարելի մակարդակում է:

Թողարկողը ներդրումային ծրագիրը ֆինանսավորելու նպատակով Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) հետ կնքել է վարկային պայմանագրեր (այսուհետ՝ Վարկային պայմանագրեր): Վերջինների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Վարկատու	Վարկի ստացման ամսաթիվ	Վարկի մարման ամսաթիվ	Ընդհանուր պայմանագրային ծավալ	Հիմնական գումարի մնացորդը առ 01.01.2024	Հիմնական գումարի մնացորդը առ 01.06.2024
ՎԶԵԲ (EBRD)	03.10.2017	26.05.2027	80 մլն՝ արտարժույթով (ԱՄՆ դոլար, եվրո)	-	-
	29.11.2019	26.05.2027		6,629,400 եվրո	5,510,650 եվրո
	05.10.2021	26.05.2031	70 մլն ԱՄՆ դոլար	37,500,000 ԱՄՆ դոլար	35,000,000 ԱՄՆ դոլար
	13.12.2021	26.05.2031		28,125,000 ԱՄՆ դոլար	26,250,000 ԱՄՆ դոլար
ԱԶԲ (ADB)	04.10.2017	26.05.2027	80 մլն՝ արտարժույթով (ԱՄՆ դոլար, եվրո)	6,968,099 ԱՄՆ դոլար	5,718,099 ԱՄՆ դոլար
	29.11.2019	26.05.2027		5,677,173 եվրո	4,541,738 եվրո

³ Ապահովագրված գույքերի հաշվեկշռային արժեքը 01.04.2023թ. դրությամբ կազմել է 17.4 մլրդ ՀՀ դրամ:

Վարկատու	Վարկի ստացման ամսաթիվ	Վարկի մարման ամսաթիվ	Ընդհանուր պայմանագրային ծավալ	Հիմնական գումարի մնացորդը առ 01.01.2024	Հիմնական գումարի մնացորդը առ 01.06.2024
	05.10.2021	26.05.2031	35 մլն ԱՄՆ դոլար	18,750,000 ԱՄՆ դոլար	17,500,000 ԱՄՆ դոլար
	13.12.2021	26.05.2031		14,062,500 ԱՄՆ դոլար	13,125,000 ԱՄՆ դոլար
ՄՖԿ (IFC)	04.02.2021	26.11.2030	60 մլն ԱՄՆ դոլար	44,350,365 ԱՄՆ դոլար	40,600,365 ԱՄՆ դոլար

Վարկային պայմանագրերով տրված վարկերի դիմաց գրավադրված են Ընկերության բաժնետոմսերի 100%-ը:

Ստորև ներկայացված է Ընկերության պարտքային բեռի (վարկերի և փոխառությունների) հաշվեկշռային արժեքի դինամիկան կանխատեսվող ժամանակահատվածում.

մլն ՀՀ դրամ	2023 փաստացի	2024 կանխատեսում	2025 կանխատեսում	2026 կանխատեսում	2027 կանխատեսում	2028 կանխատեսում	2029 կանխատեսում
Պարտքային բեռ ⁴	121,314	119,344	139,429	167,635	167,401	167,070	165,426

Վարկային պայմանագրերի հետ կապված ռիսկեր: Թողարկողը Վարկային պայմանագրերի շրջանակներում ունի որոշակի պարտավորություններ, ինչպիսիք են որոշ գործողություններ անելու (affirmative covenants) կամ որոշ գործողություններ անելուց զերծ մնալու (negative covenants), որոշ ֆինանսական ցուցանիշների նվազագույն և առավելագույն մակարդակ պահպանելու, վարկային միջոցները վաղաժամկետ մարելու (mandatory prepayment), ինչպես նաև հաշվետվողականության պարտավորությունները:

Ժամանակ առ ժամանակ Ընկերությունը կարող է ստիպված լինել դիմել Վարկատուներին որոշ սահմանափակումների մասով ժամանակավոր շեղումներ թույլատրելու, համաձայնություն տալու կամ սահմանափակումը վերացնելու կամ փոփոխելու համար:

Եթե Թողարկողը ի վիճակի չլինի հետևել Վարկային պայմանագրի հարաբերությունների շրջանակներում առկա սահմանափակումներին և այլ պահանջներին, հնարավոր է, որ այդ պայմանագրի պայմաններով տեղի ունենա պայմանագրային պարտավորության չկատարման դեպք (Event of Default) (այսուհետ՝ Դեֆոլտ): Դեֆոլտի դեպքում Վարկատուները կարող են պահանջել Վարկային միջոցների վաղաժամկետ մարում:

Վարկային պայմանագրերի գործողության ընթացքում Դեֆոլտի դեպքեր չեն գրանցվել: Թողարկողը վերոնշյալ իրադարձությունների տեղի ունենալու ռիսկը գնահատում է «խիստ ցածր»:

Կովենանտներ

Պայմանագրով սահմանված կովենանտները սահմանափակում են Թողարկողին որոշակի հարցերում, որոնցից էականները ներկայացված են ստորև.

- բաժնետերերին շահաբաժինների վճարում,
- ակտիվների տնօրինում (գրավադրում, վաճառք, փոխանցում),
- միաձուլում, լուծարում, բաժանում, միացում կամ վերակազմակերպում,

⁴ Հաշվարկվում է որպես վարկերի, պարտատոմսերի և փոխառությունների ընթացիկ և ոչ ընթացիկ հոդվածների հանրագումար:

- այլ տեսակի գործունեության իրականացում,
- բաժնետոմսերի հետգնում, մարում, բաժնետոմսերի օպցիոնների կնքում կամ բաժնետոմսերով տրվող իրավունքների փոփոխություն,
- փոխառությունների կամ երաշխիքների տրամադրում որևէ անձի,
- նոր երկարաժամկետ փոխառու միջոցների ներգրավում.

Թողարկողը ստացել է Վարկատուների հավանությունն Ազդագրի ներքո մինչև 40 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով Պարտավորումների թողարկման ծրագիրն իրականացնելու համար:

Նույն պայմանագրերի շրջանակներում Թողարկողը պարտավորվել է⁵.

- ապահովել պատշաճ հաշվապահական և կառավարչական համակարգեր,
- նշանակել և պահպանել միջազգայնորեն ճանաչված անկախ աուդիտորական ընկերության,
- իրականացնել բնապահպանական և սոցիալական հարցերի մեղմացման և բարելավման միջոցառումների պլանը,
- ապահովել զուտ պարտք/EBITDA⁶ գործակցի և ընթացիկ գործակցի (սնթացիկ ակտիվներ/ընթացիկ պարտավորություններ) ստորև ներկայացված սահմանային ցուցանիշներին համապատասխանությունը.
 - զուտ պարտք/EBITDA հարաբերակցությունը հաշվարկային ժամանակահատվածում չպետք է գերազանցի 3.5:1 ցուցանիշը,
 - ընթացիկ գործակցը հաշվարկային ժամանակահատվածում չպետք է պակաս լինի 1:1 ցուցանիշից:

Ստորև ներկայացված խախտումները նույնպես կարող են հանգեցնել Ընկերության Դեֆոլտի.

- մայր գումարի և տոկոսագումարի չվճարումը,
- որևէ պետական մարմնի կողմից Ընկերությանը պատկանող գույքի, ակտիվների, բաժնետիրական կապիտալի ազգայնացումը, բռնագրավումը կամ այլ կերպով սեփականազրկումը,
- Ընկերության լուծարման, սնանկության կամավոր և ոչ կամավոր վարույթները (voluntary and involuntary proceedings):

Պարտադիր վաղաժամկետ մարում (mandatory prepayment)

Վարկային միջոցները ենթակա են պարտադիր վաղաժամկետ մարման, եթե տեղի է ունեցել **վերահսկողության⁷ փոփոխություն (change of control)**: Վերջինս կհամարվի տեղի ունեցած այն դեպքերում, երբ տեղի ունենա ստորև ներկայացված դեպքերից/իրավիճակներից որևէ մեկը.

⁵ Ներկայացված են էական պարտավորվածությունները

⁶ Վարկային պայմանագրով սահմանված զուտ պարտք և EBITDA ցուցանիշների հաշվարկները կարող են որոշակիորեն տարբերվել Ազդագրում ներկայացված ցուցանիշների հաշվարկներից:

⁷ Թողարկողի կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով, նրա հետ կնքված պայմանագրին համապատասխան, գործարար համբավով, հեղինակությամբ կամ այլ կերպ հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն Թողարկողի կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա էապես ազդելու կամ Թողարկողի գործունեության ուղղությունները, ոլորտները կանխորոշելու

- Թողարկողի, վերջինիս բաժնետերերի վերահսկողության փոփոխությունը,
- որևէ իրադարձություն, ինչի արդյունքում Թողարկողի բաժնետերերին կդադարի պատկանել Թողարկողի բաժնետոմսերի 100 տոկոսը,
- որևէ իրադարձություն, ինչի արդյունքում Թողարկողի իրական շահառուներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն կդադարի պատկանել Թողարկողի բաժնետոմսերի ամենաքիչը 80 տոկոսը:

Արտարժությալին ռիսկ: Թողարկողի կողմից ներգրավված վարկերի մեջ արտարժությալին վարկերն ունեն մեծ տեսակարար կշիռ: Արտարժությալին շուկայում փոխարժեքների տատանումները կարող են ազդեցություն ունենալ Թողարկողի գործունեության վրա, սակայն հարկ է նշել, որ համաձայն անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանության՝ նախատեսված ներդրումային բաղադրիչի՝ փոխարժեքի տատանումների արդյունքում կրած վնասները ենթակա են փոխհատուցման:

Թողարկողի ղեկավարությունը վերոնշյալ ռիսկային գործոնների իրականանալու հավանականությունը գնահատում է «խիստ ցածր»: